ՈՐՊԵՍ ԼԻԻՐԱՎ ԿՈՂՄ,

ԱՅՆ Է՝ ՈՉ ԹԵ ԴԻՏՈՂ, ԱՅԼ ՊԱՀԱՆՋԱՏԵՐ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հոկտեմբերի 20-ի նիստի մասին լրագրային հաղորդագրության մեջ կարդում ենք. «Ազգությունների խորհրդի ազգային քաղաքականության և ազգամիջյան հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Տարազևիչը ինֆորմացիա տվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պրոբլեմի ուսումնասիրման դեպուտատական հանձնախմբի աշխատանքի արդյունքների մասին: Հանձնաժողովը, համակողմանիորեն ուսումնասիրելով այդ ռեգիոնում տիրող վիճակը, մի շարք առաջարկություններ էր արել ստեղծված իրավիճակի կարգավորման վերաբերյալ: Դիսկուսիայի ընթացքում մշակվեցին պրոբլեմի քաղաքական կարգավորման վերաբերյալ առաջարկություններ, որոնք հանձնվեցին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներին: Այնուհետև այդ առաջարկությունները ներկայացվելու են ԽՍՀՄ Գերագույն խորհրդին»:

Այսպես, մշակված առաջարկությունները հանձնվել են միայն Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և ԼՂԻՄ-ից ընտրված ժողովրդական դեպուտատներին, բայց ոչ նաև Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին կամ գոնե Հայաստանից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներին: Սա, իհարկե, վերջինիներս չի զրկում Գերագույն խորհրդում առաջարկությունների ինքնարկմանն ակտիվորեն մասնակցելու հնարավորությունից: Բայց արվածը բացահայտ խտրականություն է, եթե չասենք ավելին: Դա առավել ևս տարօրինակ է, քանզի կենտրոնական իշխանությունները մինչև հիմա վարել են Ադրբեջանի և Հայաստանի միջև հավասարակշռություն պահպանելու յուրօրինակ քաղաքականություն, թեև դա մշտապես ավելի պետք է եղել Ադրբեջանին, քան մեզ, որովհետև փրկել է երբեք ուղղակի պատասխանատվությունից ապօրինությունների ու վանդալիզմի համար՝ սումգայիթից մինչև շրջափակումը:

Այնուամենայնիվ, ընթերցողի թույլտվությամբ չեղվելով մեր հիմնական նպատակից, ցանկանում ենք ասել, որ «հավասարակշռությունը», հավանաբար, գալիս է երանից, որ Լեռնային Ղարաբաղի հարցում «հաղթողներ և պարտվողներ չպետք է լինեն» առարկայազուրկ կարգախոսը, որը մեզ հրամցվել է ի վերուստ, դրա հեղինակների համոզմամբ վերաբերում է ոչ միայն խնդրի վերջնական հանգուցալուծմանը, այլ նաև գործի ամբողջ ընթացքին: Եվ այն դարձել է մեր արդարացի պահանջի դեմ ուղղված ամենամի քայլի իմաստը կանխորոշող ընկրզրուքք: «Հաղթանակը» և «պարտությունը» բացառելու մտայնությամբ էլ ու անաչառություն խաղալով կեղծում, խեղաթյուրում են իրողությունները՝ չանալով ապակողմնորոշել խորհրդային և միջազգային հասարակական կարծիքը: Սրանում մենք ավելորդ անգամ համոզվեցինք, երբ Ադրբեջանի կողմից Արցախը և Հայաստանը տնտեսական շրջափակման ենթարկելու փաստը քննարկվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում: Այդ նույն ոգով շրջափակման մասին շարունակում է գրել կենտրոնական մամուլը՝ ենթվելով ենց պաշտոնական շրջանների տեսակետի վրա: Այսպես, օրինակ, «Իզվեստիայի» հոկտեմբերի 20-ի համարում տպագրված հարցազրույցում ներքին գործերի մինիստրության՝ փոխադրամիջոցների գլխավոր վարչության պետ, ներքին ծառայության գեներալ-լեյտենանտ Վ. Եգորովը շրջափակման հանցավորների մասին թերթի թղթակից Ս. Տարանովին ասում է հետևյալը. «Բայց, խոսելով երգնաժամի պատճառների մասին, պետք չէ անել այնպես, որ մի կողմը «զոհն է» մյուսը՝ «ագրեսորը»: Եվ Վ. Եգորովը բերում է առանձին փաստեր, Մեղրու շրջանում տեղի ունեցած առանձին դեպքեր, որոնք էլ իբր «պատճառ դարձան, որպեսզի Ջուլֆա կայարանի լոկոմոտիվային դեպոյի մեխանավարները հրաժարվեն զենքերը վարել»:

Այսպես առանձին միջադեպեր մեկնաբանվում են իբրև համարժեք միջազգային իրավունքով «ագրեսիայի» գործողություն ճանաչված շրջափակման երևույթի: Իսկ ինչպե՞ս հաշտեցնել նման տեսակետը նույն Վ. Եգորովի բերած փաստերի հետ հանցավորների դեմ քրեական գործեր հարուցելու վերաբերյալ, որտեղ թվարկված անձինք միայն ադրբեջանցիներ են: Չէ՞ որ նա ինքն է ասում, որ պաշտոնական զգուշացում է արվել Շիրվանի, Լենինաբադի, Նորաշենի, Կիրովաբադի կայարանների աշխատողներին և Բալաչարի, Ջուլֆայի, Մինջևանի գործադուլային կոմիտեների անդամներին: Բայց այս քաղաքներից ոչ մեկը Հայաստանի տարածքում չի գտնվում: Ավելին, որպեսզի էլի տեղանուններ չբթվարկի, թերթն այստեղ գեներալ-լեյտենանտի խոսքն ընդմիջում է կախման կետերով:

Վ. Եգորովը խոստովանում է, որ ռեգիոնում ապակայունացման պատճառը քաղաքական է, սակայն չի համարձակվում տալ երևույթի քաղաքական գնահատականը:

Արցախի պրոբլեմում և նրանից ածանցված բոլոր հարցերում Հայաստանը լիարժեք կողմ է և տուժո՛ղ կողմ: Ուստի անարդարացի է նրան որևէ ձևով մեղադրանքի ենթարկել ճարտի լուծման գործընթացից ամբողջությամբ կամ նրա առանձին փուլերում: Նախ՝ ի սկզբանե հարցադրման մեջ կա ուղղակի դիմում Հայաստանի Գերագույն խորհրդին՝ Արցախը Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ ընդունելու խնդրանքով:

Անցյալ տարվա հունիսի 15-ին Հայաստանի օրենսդիր իշխանության գերագույն մարմինը միանշանակ պատասխան է տվել այդ դիմումին՝ որոշելով բավարարել ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի խնդրանքը մարզը ՀԽՍՀ-ի կազմի մեջ ընդունելու վերաբերյալ: Դրանով իսկ Հայաստանը, դուրս չգալով իր իրավասության սահմաններից, կատարել է պետական պատասխանատու ակտ և պաշտոնապես ներգրավվել ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման գործընթացի մեջ:

Դեռևս մինչև այդ ակտը, սումգայիթյան ցեղասպանությունից հետո, ապա անցյալ տարվա նոյեմբերին Ադրբեջանում ծայր առած հայերի զանգվածային բռնագաղթի ժամանակ Հայաստանը եղել է և մնում է հայ փախստականների հիմնական ընդունողը և պատսպարողը՝ իր վրա վերցնելով նրանց հարկադրի համար նյութական ու իրավական պատասխանատվությունը, ստանձնելով Ադրբեջանի հետ նրանց բնակարանափոխանակման, գույքային, փաստաթղթերի հետ կապված և այլ հարցերը լուծելու պարտավորությունները:

ՀԽՍՀ իրավունքները Արցախի հայության հետ տնտեսական և մշակութային կապերը զարգացնելու բնագավառում ճանաչված են ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988 թ. մարտի 24-ի՝ «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 1988—1995 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման արագացման միջոցառումների մասին» որոշմամբ և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի հրամանագրով: Եվ, վերջապես, մարդկային բարոյական նորմերի տեսանկյունից, ինչպես ավանդաբար ընդունված է աշխարհում, միանգամայն բնականոն և արդարացի է համարվում, երբ որևէ ազգ կամ ժողովուրդ ամենաանմիջական շահագրգռություն է ցուցաբերում իր առանձին հատվածների ճակատագրի հարցում, մանավանդ նրանց համար բախտորոշ պահերին: Օրինակ, ոչ ոք չի այպանում Հարավային Իռլանդիային՝ հյուսիսիռլանդացիների, կամ արաբական երկրներին և նրանց լիգային՝ պաղեստինցիների կամ Լիբանանի հարցով մտահոգից և ամենայն շահագրգռությամբ զբաղվելու համար: Ընդհակառակը, միջազգայնորեն համարվում է անբնական, երբ փորձում են նրանց մեկուսացնել իրենց ազգակիցներին վերաբերող հարցերի լուծումից: Իրապես, Լեռնային Ղարաբաղի հարցը բարձրացրել է ԼՂԻՄ-ի հայությունը ինքնորոշման իրավունքով: Բայց Հայաստանն իբրև շահագրգռված կողմ պատահաբար չի հայտնվել այս գործում: Խնդիրն անմիջականորեն առընչվում է Հայաստանին, քանզի, ինչպես միանգամայն ճիշտ արձանագրված է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թ. սեպտեմբերի 17-ի՝ «ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման ուղղությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ ներկայացվող առաջարկություններ մասին» որոշման մեջ, «Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցվել է ոչ իրավասու մարմնի՝ (Ռկ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 5-ի անօրինական որոշման հիման վրա՝ այն ժամանակ մարզի բնակչության 95 տոկոսը կազմող հայ բնակչության իրավունքների ոտնահարմամբ»: Դա նշանակում է, որ տարածքային վեճը երկու հանրապետությունների միջև հանիրավի լուծվել է հօգուտ Ադրբեջանի՝ անտեսելով բոլոր իրավական, էթնիկական, պատմական, բարոյական և հոգեբանական գործոնները: Եվ հողատարածությունը, որը բոլոր այդ հատկանիշներով պետք է պատկաներ Հայաստանին, ապօրինաբար տրվել է Ադրբեջանին: Ուստի հիշյալ որոշման մեջ իրավամբ շեշտվում է, որ «տեղիանում ծագած ազգամիջյան պրոբլեմների արմատները 1920—1921 թվականներին ապօրինաբար և միջազգային իրավունքի տարրական նորմերի կոպիտ խախտմամբ ընդունված պայմանագրերի ու որոշումների մեջ են...» (նկատի ունի նաև 1921 թ. մարտի 16-ի խորհրդա-թուրքական պայմանագիրը, որով, Թուրքիայի ենթադրմամբ, Նախիջևանը հանձնվեց Ադրբեջանին):

Հետևաբար, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դիմումը ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ ճանաչել ԼՂԻՄ-ի ինքնորոշման իրավունքը, «որն արտահայտված է ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջանների որոշումներում», պատմական անարդարությունը վերացնելու պահանջ է: Մինչդեռ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը ոչ միայն անպատասխան թողեց այս դիմումը, այլև փորձ է արվում Հայաստանը մեկուսացնել ԼՂԻՄ-ի պրոբլեմի քաղաքական լուծմանը մասնակցելուց և դատապարտել մեզ հանգուցալուծմանը ըստ սեղի պասիվ դերին: Կասկածից դուրս է, որ գործերի նման ընթացքն ավելի քան ձեռնտու է Ադրբեջանի ղեկավարությանը և ժողովրդական ճակատին, որոնք կցանկանային Արցախի հարցը դարձնել զուտ ներհանրապետական հարց: Այդ ցանկությունն իր արտացոլումն արդեն գտել է Ադրբեջանի Գերագույն խորհրդի ընդունած սահմանադրական օրենքում հանրապետության ինքնիշխանության (սուվերենության մասին), որտեղ ենթադրվում է անօրինական ճավակնություն՝ ԼՂԻՄ-ի հարցի լուծումը դարձնել Ադրբեջանի հանրապետական իշխանությունների մենաշնորհային իրավունքը:

Այդ իսկ պատճառով զգուշավորության և սթափության անհրաժեշտությունը թելադրում է տեսնել ուղղակի կապ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած օրենքի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության որոշման միջև, որը ԼՂԻՄ-ի հարցի քաղաքական լուծման վերաբերյալ մշակված առաջարկությունները հանձնել է միայն Ադրբեջանի Գերագույն խորհրդին և Լեռնային Ղարաբաղից ընտրված ժողովրդական դեպուտատներին:

Նման վտանգավոր մոտեցումը մեր համազգային պրոբլեմը և պահանջի արդարությունը շրմրոնելու կամ ըմբռնել շրցանկանալու հետևանք է: Բայց կան նաև այն ըմբռնողներ:

Ես պարզապես ցնցվեցի, երբ Ա. Մ. Կաշպիրովսկին համամիութենական հեռուստատեսության առաջին ծրագրով պսիխոթերապիայի հերթական սեանսն անցկացնելիս ասաց, որ սեանսին հետևողների ուշադրությունը չի շեղում Ղարաբաղի պրոբլեմից, որ նրանք կարող են մտածել այդ մասին, որ ինքն էլ է այդ մասին խորհում:

Բարեբախտաբար, կան նաև մեր համազգային պրոբլեմն ըմբռնողներ նաև պաշտոնատար անձանց մեջ, ովքեր անմիջականորեն առնչվում են Արցախի հարցին:

Ես կարծում եմ, որ մեր համազգային պրոբլեմը, եթե ոչ օրգանապես (օտարի համար դա գուցե անկարելի է), ապա ինտելեկտով ըմբռնել է ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի գաղափարախոսական աշխատանքների համար պատասխանատու Վ. Սիդորովը: «Արգումենտի ի ֆակտի» շաբաթաթերթի թղթակից Ն. Զապլիգինի հետ նրա հարցազրույցում (տես «Արգումենտի ի ֆակտի» № 39) հայերի մասին ասվում է. «Ողբերգական պատմությունը այդ ժողովրդին ցրել է աշխարհով մեկ, բազմիցս հասցնելով լիակատար ոչնչացման եզրին: Ամոթալի ի՞նչ կա նրանում, որ նոր պատմական պայմաններում նրանք ձգտում են մեկը մյուսին և տեսնում են այստեղ հեռանկար: Այլ բան է, թե ինչ ձևերով կընթանա այդպիսի միավորումը: Ուտոպիական է երազել, առնվազն հիմա, պետական վերածննդի մասին պատմական սահմաններում»:

Կարելի է շնամանել Վ. Սիդորովի հարցազրույցի որոշ մտքերին ու հետևություններին, բայց չի կարելի այս խոսքերում չնկատել մեր համազգային պրոբլեմի, այսինքն՝ մեր ժողովրդի բեկորվածության և վերամիավորվելու նրա համահավասար տենչի ըմբռնումը: Արժե խոսել Վ. Սիդորովի մեկ այլ դիտողության մասին ևս. «Ինձ մեկ անգամ չէ, որ հարկ է եղել խոսել հայ մտավորականության հետ այն թեմայի շուրջ՝ արդյոք նրանք կանխագուշակո՞ւմ են, թե ազգի բարոյական, հոգեբանական առողջության համար ինչ հետևանքներ կարող են ունենալ դաստիարակության գաղափարները՝ խառնված իրենց ժողովրդի բացառիկության կոնցեպցիաների հետ... Չէ՞ որ այսօր դժվար է հանդիպել ընկերական թեֆ, որտեղ նորից ու նորից չխոսվեր ցեղասպանության մասին և այլն: Մինչև իսկ երեխաները դաստիարակվում են այդ ոգով՝ կորցնելով անհոգ ծիծաղելու ունակությունը:

Ես Ղարաբաղում միտինգների մասնակիցների օրինակով տեսնում եմ, թե ինչպես է ամեհամիս ընկնվում բնակչության ոգին, թե ինչ հեշտությամբ են արցունքներ հայտնվում մարդկանց աչքերում, երբ խոսում են հայ ժողովրդի անելանելի ճակատագրի մասին, ինչ դյուրահավատությամբ է ընկալվում թշնամիների նենգությունը մասին ամեն մի անվանարկություն: Եվ ինչպես այդ հողի վրա ծնվում է անգուսպ ֆանատիզմը»:

Վստահ եմ, որ խորաթափանցությունն այստեղ դավաճանել է Վ. Սիդորովին, որքան էլ որ նրա դիտողությունը թվա ճիշտ: Ցավալի է, որ այդքան սուր դիտողություն ունեցող մարդու համար սումգայիթը Ադրբեջանում ստեղծված մթնոլորտի արդյունքն է, իսկ հայերի զգայություն չունեցող «անգուսպ ֆանատիզմը» նա բխեցնում է պատմական հողի վրա ձևավորված ազգային բնավորությունից: Սա նույնիսկ ավելի վատ է, քան հավասարակշռությունը պահպանելու տխրահռչակ միտումը:

Անշուշտ, մեր պատմական անցյալը խոր հետք է թողել մեր ազգային բնավորության ու խառնվածքի վրա: Մենք դարձել ենք մտածկոտ ու խոհուն՝ երբեմն մռայլ ու խոժոռ, բայց ոչ հուսալքված ու լալկան, առավել ևս երբե՛ք հիշաչար ու կասկածամիտ նույնիսկ նրանց նկատմամբ, որոնց նախնիները կործանել են մեր պետականության վերջին հետքերը, զավթել մեր երկիրը, տիրացել մեր հողին ու տարածքին, կողոպտել մեր քրտինքի պտուղները, մզկիթների վերածել մեր եկեղեցիները, ցեղասպանորեն ոչնչել մեր ազգությունը: Իսկ հրաց սոցիալիստացած «ինտերնացիոնալիստ» հետնորդները վիճարկում են մեր օրինական, բնական ու բանական իրավունքը նույնիսկ այն փոքրիկ հողակտորի նկատմամբ, որը հաջողվել է պահպանել հազարամյակների մեր հայրենիքից: Եվ, այնուամենայնիվ, մենք պատրաստ ենք երկխոսության:

Բայց մի՞թե կարելի է հուսալքված ոչ լալկան անվանել մի ժողովրդի, որն ի հեռուստ դաժան ճակատագրի մնացել է կառչած իր հայրենիքին: Եվ մի՞թե դրանում չէ արցախցիների համառության, տոկունության ու անհաճոյ հաստատակամության գաղտնիքը:

Այս նշմարտությունն անհրաժեշտ է ըմբռնել ամբողջ խորությամբ հատկապես այսօր, երբ պետք է դիմանալ նոր, ավելի դաժան փորձությունների: Դրանք անխուսափելի են այն պատճառով, որ շրջափակումը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի աշնանային նստաշրջանում շրջափակման հարցի քննարկման խղճուկ արդյունքները, Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած սահմանադրական օրենքը հանրապետության ինքնիշխանության մասին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության սեպտեմբերի 20-ի որոշումը, որի մասին արդեն ասացինք, պահանջում են նորովի գնահատել իրերի վիճակը, մշակել նոր մոտեցումներ, բայց հնարավորին չափ ճշգրտորեն կռահելով, թե ուր է տանում իրադարձությունների զարգացումը: Դա ճակատագրական անհրաժեշտություն է անսխալ գործելակերպ ունենալու համար:

Ադրբեջանի ղեկավարության անեֆսիոնիստական, գաղութատիրական քաղաքականությունն Արցախի նկատմամբ ըստ էության վայելում է կենտրոնական իշխանությունների հովանավորությունը:

Ո՞րն է այս բացահայտ հայահալած ուղղության պատճառը: Մի՞թե ինքնորոշվելու ձգտումը հանցանք է: Մի՞թե դատապարտելի է, երբ այս կամ այն ժողովուրդը համարձակվում է կատարել ընտրություն իր համար ճակատագրական նշանակություն ունեցող ազգային կամ սոցիալական հարցերում:

Հանդես գալով Նյու Յորքում, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընթացիկ նստաշրջանում, ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստր էդվարդ Շևարդնաձեն, նկատի ունենալով Հունգարիայում և Լեհաստանում տեղի ունեցող քաղաքական անցուդարձերի նկատմամբ Խորհրդային Միության ղեկավարության վերաբերմունքը, հայտարարեց. «Միջազգային նոր հարաբերությունների կառուցման մեջ մեր արտաքին քաղաքականությունը կողմնորոշված է դեպի ժամանակակից աշխարհի դրական էվոլյուցիան և նրա կայունությունը: Այս կողմնորոշումը անփոփոխ է մինչև իսկ որոշ վերափոխումների դեմ-հանդիման, որոնք շոշափում են մեր անմիջական շահերը, ընկերակցության շահերը, որին մենք պատիվ ունենք պատկանելու: Բայց մենք հավատարիմ ենք հռչակված սկզբունքներին և առաջվա պես հաստատում ենք, որ ժողովուրդների ընտրությունը չի կարող և չպետք է վերացվի ուժով, իսկ կայունությունը ձեռք չի բերվում այն կիրառելու սպառնալիքներով, ներխուժմամբ, շղջափակմամբ և ուրիշ պատժամիջոցներով»: Հոկտեմբերի 23-ին հանդես գալով ԽՍՀՄ Գերագույն խորհրդում է. Ա. Շևարդնաձեն կրկին դատապարտեց ուժի կամ ուժի սպառնալիքի գործադրումը պետությունների հարաբերություններում, այդ թվում, շրջափակումը:

Ահա սկզբունքներ, որոնք կիրառվում են խորհրդային ղեկավարության կողմից արտաքին քաղաքականության, բայց ոչ ներքին քաղաքականության մեջ: Ինչու՞ Արցախի հայության՝ ազգի ինքնորոշման սկզբունքից բխող ընտրությունը փորձում են վերացնել հենց ուժով, ուժ կիրառելու սպառնալիքներով և շրջափակմամբ: Նույն միջոցներով ուզում են պատժել մեզ այն բանի համար, որ մենք զորավիգ ենք Արցախի մեր եղբայրների և քույրերի արդարացի ու իրավացի պահանջին:

Մասնավորացնելով իր ասածը Լեհաստանի օրինակով, էդվարդ Շևարդնաձեն ասաց. «Սպառնալիքը երկրներին պարտադրում է ոչ թե ժողովրդական կամարտահայտությունը, այլ քաղաքական ու գաղափարախոսական անհանդուրժողությունը՝ շովինիզմը, կայսերական և ազգայնական գիտակցության ծայրահեղական էքսցեսները: Եվ սոսկ այնտեղ, որտեղ նրանք ծնում են բռնություն և ապակայունացնում են երկրների ու ժողովուրդների կյանքը, պետք է գործի օրինական պաշտպանության մեխանիզմը»:

Իրապես, ոչ թե հայ ժողովրդի կամարտահայտությունը, որը ներդաշնակում է համամարդկային արժեքների ու ճշմարտությունների հետ, այլ շովինիզմը, կայսերապետական, գաղութատիրական նկրտումներն են ապակայունացնում իրադրությունը ռեգիոնում և ծնում բռնություն: Բայց ահա այդ ամենի դեմ, չգիտես ինչու, չի գործադրվում «օրինական պաշտպանության մեխանիզմը»:

Այս ամենը սոսկ ընդգծում է դարաբալյան շարժման ազգային-ազատագրական բնույթը և բարձրացնում է նրա կշիռը միջազգային-քաղաքական ասպարեզում: Իբրև համաշխարհային-պատմական զարգացմանը հատուկ երևույթի արտահայտություն: Այս առումով մենք տարբեր առիթներով նշել ենք, որ դարաբաղյան շարժման վրա պետք է տարածվեն միջազգային իրավունքի բոլոր նորմերը, որոնք վերաբերում են ազգային-ազատագրական շարժումներին: Որքան ավելի մարդկությունը մարդկայնանա, որքան ավելի ճրան կառավարեն տարողունակ ուղեղները և անբասիր խիղճը, այնքան ավելի հաստատ ու անտարակուսելի կլինի հայ ժողովրդի ապագան:

Վերադառնալով տիրող իրավիճակին և մեր անելիքներին, հարկ է շեշտել, որ զենքերի շարժումը դեռևս չի նշանակում շրջափակման լիակատար վերացում: Մնում են փակված ավտոճանապարհները: Պահպանվում է Արցախի արտաքին ու ներքին շրջափակումը: Չկա ոչ մի վստահություն, որ շրջափակումը վաղը չի կրկնվի: Համենայնդեպս, շրջափակման դասերը, Ադրբեջանի ինքնիշխանության օրենքի ընդունումից բխող հետևանքների հետ միասին, մեզ թելադրում են լրջորեն խորհել ապագայի երաշխավորման համար մեր անելիքների մասին:

Սխալ կլիներ ենթադրել, թե պայքարի մեր հնարավորությունները սպառվել են կամ երբևիցե կսպառվեն: Մենք չենք նահանջի հնչման ներքո: Ընդհակառակը, կարող ենք և պետք է ուժեղացնենք պայքարը Արցախի և Հայաստանի վերամիավորման սուրբ նպատակի համար, իբրև վեճի առարկա հարցով շահագրգռված լիիրավ կողմ: Իսկ եթե Արցախի հարցի լուծումը կրկին դանդաղի կամ մտնի փակուղի, կարծում եմ, անհրաժեշտ է, որ Հայաստանի Գերագույն խորհուրդը Արցախը հոչակի որպես Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անբաժան մասը՝ դրանով ստանձնելով Ադրբեջանի ոտնձգություններից նրա պաշտպանության, տնտեսական, սոցիալական ու մշակութային կյանքի շատ թե քիչ բնականոն ընթացքն ապահովելու գործը: Եթե ԼՂԻՄ-ը բողնվի Ադրբեջանի կազմում, հակառակ նրա բնակչության պարզորոշ արտահայտած կամքի, որն, ըստ իս, անընկնելի է, և Ադրբեջանի իշխանությունները փորձեն ուժով վերահաստատել իրենց վարչական իշխանությունը Արցախի վրա, ապա անհրաժեշտ կլինեն ամենավճռական գործողություններ ագրեսիայի դեմ: Միաժամանակ հիմա ևեթ Հայաստանի Գերագույն խորհուրդը պետք է բոլոր հնարավոր միջոցներով միութենական իշխանություններին ստիպի կատարել սահմանադրության 81-րդ հոդվածով մեր հանրապետության սուվերեն իրավունքները պաշտպանելու իրենց պարտավորությունը, ապահովելով Հայաստանի և Արցախի անվտանգությունը, ՀԽՍՀ առևտրատնտեսական կապերի անխափան իրականացումը երկրի մյուս շրջանների հետ երկաթուղով ու ավտոուղիներով, այդ թվում Ադրբեջանի տարածքով անցնող՝ ելնելով կոմունիկացիաների (երկաթուղիների, ավտոճանապարհների, նավթամուղների, գազամուղների, հեռագրագծերի և հեռախոսագծերի) էքստերիտորիալության սկզբունքի: Այնպիսի երեվույթների դեմ, ինչպիսիք ուժի գործադրումն է և շրջափակումները, պետք է գործի դնել միջազգային իրավունքի նորմերը և հասնել այն բանին, որ միջազգային հանրությունը, առաջին հերթին ՄԱԿ-ը Խորհրդային Միությունից պահանջի երկրի ներսում վճռաբար վերջ դնել իր իսկ ստորագրած փաստաթղթերով միջազգայնորեն արգելված պատերազմի և ագրեսիայի գործողություններին:

Շատ կարևոր դեր կարող են խաղալ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները՝ իրենց կտրուկ գործողություններով ու պահանջներով ստիպելով անվերապահորեն ճանաչել Հայաստանի լիիրավությունը Արցախի հարցում: Լիիրավության իրավունքով մենք զորու ենք դիմել աշխարհի բոլոր դեմոկրատական կառավարություններին ու պառլամենտներին, ՄԱԿ-ին և ոչ կառավարական միջազգային կազմակերպություններին, ոտքի հանել համաշխարհային հասարակական կարծիքը: Եվ սա հարկ է անել պաշտոնապես՝ Հայաստանի Գերագույն խորհրդի դիմումով, ելնելով հանրապետության ինքնիշխանության իրավունքից:

Հնարավոր ամեն ինչ անհրաժեշտ է անել թույլ չտալու համար տեղական կոնֆլիկտ երկրում, որն ինքը հավակնում է վճռական դեր խաղալ աշխարհի զանազան մասերում ընթացող տեղական կոնֆլիկտների վերացման խնդրում: Իսկ կենտրոնական մարմինների դիրքորոշումն Արցախի հարցում հղի է այդպիսի վտանգով:

Եվ վերջապես, մեր պայքարի համար դեռևս մնում է ուժի չօգտագործված ևս մեկ, շատ կարևոր և, թերևս, ամենաարդյունավետ աղբյուրը՝ ազգային շարքերի միասնությունը, մեր ժողովրդի բոլոր առողջ և կենսունակ ուժերի համախմբումը, իշխանություններից մինչև ոչ պաշտոնական կազմակերպությունները և ներքին ու արտաքին սփյուռքը: Դա թույլ կտա իրականացնել իրապես արդյունավետ համաձայնեցված, միասնական գործողություններ: Մատները զորեղանում են, երբ միանալով ու կծկվելով դառնում են բռունցք:

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
«Երեկոյան Երևանի» քաղաքական մեկնաբան